LMY
884

2011

№ 11521
ш 5.
п 3.
№ 884.

ԱՂՕԹՔ

ԱԲԵՂԱՅԻ

ԱՐՔԻ
38

4.

Обл. Библиотека
Гос. Публичная
Библиотека
им. А. Маяковского
Свердловск

~~4851~~
~~38~~

(~~20204-60~~)

Фрм оценка ← (25731.60)

884-2011
н.Б. 880

ԱՂՕԹՔ ԱՐԵՂԱՑԻ

Հայկ
884
884
884
№ 1152.ж

ՅԻՇԱՏԱԿ

Հ. ՍԱՀԱԿԱՑ ՀԷՔԻՄԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱՆՁԻՆ

ԾԱՂԿԱԲԱՐ ԽԱՄՐԵՑԵԼՈՑ

Ի Ս. ՂԱԶԱՐ ՎԵՆԵՏԻԿՈՅ

1876

ԱՂՕԹՔ

ԱԲԵՂԱՅԻ

Աստուած իմ, Աստուած իմ, օրհնեմ զքեզ. որ 'ի յաւիտենից ունէիր զիս 'ի մտի քում, և ստեղծեր զիս 'ի ժամանակի առ 'ի քէն սահմանելոյ։ Երկիր պագանեմ քեզ, Տէր իմ Տէր, որում երկինք և երկիր ոչ են բաւական, և հաճեցար բովանդակիլ յիմաստ մի մտացս, Թարգմանիլ 'ի բարբառ մի բերանոյս։ Գոհանամ զքէն, Արարիչ իմ, Խնամիչ իմ, և Փրկիչ իմ. սկիզբն իմ անժամանակ, և

կատարած իմ անվախճան. կեանք կենաց իմոց և հոգի հոգւոց իմոց։ Աստուած իմ ամենայն, և ամենայն իմ Աստուած միայն։ Զքէն գոհացայց, զքեզ օրհնեցից, և զքեզ սրբեցից մինչև եմն, և եղէց քեզ, որ էիրդ և ես և ցկեաս յաւիտեան։

Բարութիւն անսահմանելի, գոհանամ զքէն. որ ըստեր և ընուս զիս յառաստուածենէ բնութեան քո, յառաջնմէ պահէ էութեանս իմոյ մինչև ցայժմ. և ոչ թողցես խոպառ զանձն իմ՝ յոր զքո իսկ զկենդանագիր նշմարեաս. որ հայիս ողորմութեամբ և հաճիս 'ի գործս կամաց քոց, և պահես յանխոտ լինութեան քում՝ 'ի ժամանակի և 'ի յաւիտեանս։ Գոհանամ զամենայն և միոյ միոյ տրիցդ և պարգևաց՝ որ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ և ըստ մտաց. և զքոյս զառ 'ի վերուստ

ելուցեալս յին՝ առ քեզ վերառա-
քեմ, տուիչդ և ընդունիչ բնաւից,
ելիցս թէ անթերի և անարատ՝ որ-
պէս եղուրդ ինձ։

Գոյութիւն անճառելի, հաւա-
տամ՝ ի քեզ, որպէս հաւատացին
ոգք՝ ի սկզբանէ հարքն՝ և սիրեցին
զքեզ. որպէս գաւանի սուրբ և ա-
ռաքելական եկեղեցի կաթուղիկէ,
ժողովարան ընտրելոց և շաբաթա-
րան ճշմարտութեան՝ աղբիւրա-
ցելոյ՝ ի Բանէդ կենդանւոյ. որ եկն
և յայտնեցաւ աշխարհի, և՝ ի խա-
ւարի մոլորութեան և անգիտու-
թեան՝ վառեաց և եթող լոյս ան-
շինջանելի, մինչև՝ ի կատարած այսր
յաւիտենի։ Խոստովանիմ զոր դու
ծանուցեր, և զոր առ՝ ի քէն ընտ-
րեալքն քարոզք բանիդ ճշմար-
տութեան՝ աւանդեցին յեկեղեցիս
ուղղափառաց. և յայտ և՝ ի սոյն

հաւատս փափագեմ կեալ և մեռանել, և սովին ժամանել 'ի սուրբ գութիւնդ անսուտէր։

Դուռն տաճարին յաւիտենական է, արահետ շաւղաց ուղղութեան, և գիւտ անկորուստ կենաց. լոյս երկրագնաց ոսից, և հովանի գլխոյ իմոյ, տէր Յիսուս, միածին որդի միայնոյ Աստուծոյ, ամենեքին հաւասար ծնողիդ. որ առ 'ի գիւտ զարտուղելոյս յերկնաչուս հեռոցն և յերանական կայանից՝ խոնարհեցար մոտ 'ի մարդկայինս բնութիւն. և իմոյին կերպիւ նուաստութեան ցիս վերստացար. հաւատամ, ընդունիմ, օրհնեմ և սիրեմ զհրաշալի անօրէնութիւնս քո. և նոքօք ակն ունիմ հասանել 'ի պատրաստեալն 'ի սկզբանէ յաւիտենից յարքայութիւն քո անուշակ։

Երկրպագեմ քեզ, խմաստու-
թիւն և սէր յաւիտենական. որ
զանկիր և զանհաղորդ բնութիւն
աստուածութեանդ խառնեցեր
անշփոթ և անաղտ ընդ ախտակիր
բնութեան մերոյ, առ 'ի բառնալ
զամենայն կիրս սորա. ամենենդ
երանութիւն, յանձն առեր զվիշտ
և զցաւ, զչարչարանս և զմահ, և
զմահ խաչի. և զնոյն զխաչ եռուր
մեզ 'ի զէն յաղթութեան ընդդէմ
հակառակամարտին մերոյ մեղա-
սէր ոսոխի, և յապաւէն յուսոյ
դիւրապայթ և ակարացեալ բնու-
թեանս մերոյ։ Անկեալ առ ոտս
դորին սրբոյ նշանի՝ աղաղակեմ
յամենայն զօրութենէ սրտի. Կե-
ցո, Տէր, և պահեա զիս ընդ հո-
վանեաւ աստուածանիշ դրոշուդ։
Խաչ քո, ո՛ Յիսուս, եղիցի ինձ զ
ժանդակ անթողլի։

Զօրութիւն ամենակալ և ամենակեցոյց, զօրացո զլուծութիւն բնութեանս իմոյ հեռանէլ անխոտոր ընդ շաւիղ՝ զոր ցուցեր ինձ երկնահրաւէր աւետարանաւդ. տուր ինձ արիանալ հոգւով, և կատարել զպարան ինձ և պատշաճ։ Մի թողուր ինձ աղարտել զոր յիսն է քո շունչ և պատկեր տիրական. այլ յաղթող լինել ինքնաբոյծ շարժմանց անբանականի մասինս, և նկրտել 'ի նմանութիւն ատուա-ծայրականիդ Յիսուսի. առնուլ յանձն զամենայն վիշտ կենցաղական. բառնալ սիրով զբեռն փոքրոգի և զլուծն քաղցուենի՝ զոր եդեր և թեթևացուցեր հեռուղաց քոց, տէր Յիսուս։

Լսութիւն եօթնարփեան, ըղձխումն և զուգակից ամենաբեր ծո-

ցոյն և Ծոցածնին, Հոգի Աստուծոյ. որ ածէր զանգոյս 'ի գոյ, և շնորհօք քո ընուս և պահէս զամենայն արարածս. որ լուսաւորեաս զմիտս բանաւորս, և արտացուցանես զոգիս իմանալիս, լուսաւորեա, վառեա, կենդանացո և զիմ սիրտս և հոգի. զի մի ստուերակերպ մարմնոյս թանձրութիւն ծածկեալ աղօտացուցէ զկնիք սկզբնատիպ պատկերիդ որ յիս։ Այլ զիս եռանդեամբ կենդանարար հրոյդ, զի շարժեցայց միշտ յարժանն. հերքեսցին յինէն խորհուրդք խաւարայինք, և եղէց որդի և ժառանգ լուսոյդ յաւիտենական։

Ընկալ հաճութեամբ, Տէր բարերար, որպէս զքոյս 'ի քոյոց՝ զոր ինչ միանգամ 'ի մանէ բարեաց առացէ յանձն իմ ամենաւատ ակն

ողորմութեան քո։ Քեզ նուիրեմ զհոգի, զմիտս և զմարմին, զամենայն զօրութիւնս իմ։ Քո իսկ եմ բոլորովին, և փափագեմ կալ և մնալ քեզ և 'ի քեզ խոպառ։ Որ ինչ անբարի յիս և առելի աչաց քոց՝ հերքեա հեռացո ջնջեա և բարձ 'ի միջոյ։ Սրբեա զիս քրտամբ և արեամբ Միածնիդ։ Լոյծ, մերկեա յինէն զտխրականս հանդերձ մեղաց և անգիտութեան։ և քաւչարար աւազանաւ ապաշխարութեան վերատին մաքրեա զանկեալն յոգիս ասատուածավայելուչ պատմուճան քումդ որդեգրութեան։

Թագաւոր երկնի և երկրի, առաջինը զիս քեզ արքանեակ և պաշտօնեայ 'ի յաւիտեանս։ կալ ինձ 'ի սպասու 'ի տաճարի քում փառաց, ընդ ընտրեալսն քո 'ի սկզբանէ, ընդ հոյլս հրեշտակաց, ընդ

Երան անմեղ մանկանցն, և ընդ դասս ամենայն առաքինեաց, որք արեամբ և զղջմամբ ճանապարհ հորդեալ ընդ վշտաշատ և բազմ-որոգայթ շաւիղ կենցաղոյս, հասին ողջամբ հոգւով՝ ի հանդիսան պատ-րաստեալ. և այժմ Երանաւէտեալք վայելեն զսէր քո անճառ, զառիթ և զվախճան յամերամ բարեացն, որ՝ ի վերս են քան զամենայն միտս։

Ժամանակաց իշխան և կիսատ-դիր, դու գիտես զթիւ և զկատա-րած աւուրց կենաց իմոց. առաջի քո թաւեալ է ամենայն շունչ հա-գագի իմոյ. մի լիցի ինձ քննել զսահման ելից իմոց, և մի փափա-քելզընդերկարութիւն անուսի կեն-ցաղոյս. այլ քեզ նուիրեալ լիցի ի-մովսանն սկիզբն և կատարած և մէջ ժամանակի վասն իմ առ՝ ի քէն չափելոյ, ամենայն բոպէիւք և մա-

սամբք, բոլոր կեանս իմ։ Տուր ինձ, Տէր, վարել միշտ յօգուտ և 'ի փրկութիւն զհամառօտս զայս. զքեզ միշտ ունելով 'ի մտի՝ յարքնութեան, և զյիշատակ քո կենաք 'ի վերայ սրտիս՝ յանդորրութեան քնոյ։

Խնամատութիւն անձառելի, որ նկարեցեր յիս զկերպարանս քո՝ լուսով բանի և մտաց, տուր ինձ յամենայն սրտէ կրթել և սերտել յանզուգականք նմանութիւն. ըզհետ ընթանալ գիտութեան բարւոյ և խորշել 'ի չարէն. հան 'ի բաց 'ի մտաց իմոց զհետաքրքրութիւն, և 'ի սրտէ՝ զցանկութիւն գիտութեան անցաւորի՝ որ ոչ ելցէ յօգուտ, այլ 'ի զբաղանս ընդունայնութեան և 'ի մոռացօնս կարեւորացն և պիտանեաց. և տնկեա յիս զտենչ գիտութեան երկնիցն

գաղտնեաց, զոր միայն սիրողին զքեզ նկատէ ակն հրաշագէտ։ Տուր ինձ զքեզ ճանաչել, զքեզ խնդրել, զքեզ յածել, քեզ զմայլիլ, քեզ լիանալ։

Այս իսկական, որ յառաջ քան զամենայն յաւիտեանս նկատեալ տեսանէիր և տեսանես զամենայն յամենայն ժամ. դու գիտես ըզպէտս իմ և զօգուտս. տուր և ինձ յամենայն ժամ զայն ևեթ խընդրել՝ զոր յին հաճիս կատարել. զօրացո զմիտս իմ և զկամն՝ անսայթաք և անսասան յուսով երթալ զճանապարհ՝ յոր կամք քո ուղղեսցեն. առնուլ յօժարութեամբ յանձն զդիւր և զդժուար, զոր և պատրաստես ինձ. կալ՝ ուր և կացուսցես, կրել զոր և առաքիցես. տուր և բարձ որպէս և ախորժես։ Եղիցին կամք քո որպէս յերկինս՝ և յիս։

Խորհուրդ անհասանելի եղակա-
նաց, որ հաճեցար անճառից իրա-
գործութեանց հաղորդս և պաշ-
տօնեայս կարգել 'ի հողեղինաց. և
զիմ իսկ անարժանութիւն կոչե-
ցեր 'ի կատարողութիւն սրբազա-
նից նուիրաց, սրբեա զմիտս իմ և
զդայարանս, առաւել քան զսե-
ղանն յոր մատչիս հանապազօր
պատարագ անմահութեան, ա-
տարութեամբ մահահոտմատանց.
զի շօշափեցից անշաղախ և անկէղ
զհուրդ ամենածախ. քաւեցայց և
քաւեցից քոյինագործ զենմամբ՝
զիմն և զամենայն աշխարհի մե-
զանս. ըստ անդատապարտ զմեծս
զայս սպասաւորութիւն. և կացից
անամօթ՝ ընդ ընտրեալսն քո ա-
ջեայս յաւուրն յայտնութեան:

Ծով անծայրածաւալ բարեաց,

որ անցանեն ընդ միտս և ընդ կար-
ծիս, անձառաւարաշ խորհուրդ կե-
նաց, սատուածախուռմբ հաղոր-
դութիւն, երկրպագելի Մարմին և
Արիւն Տեառն իմոյ Յիսուսի. տուր
ինձ տենչալ հանապազ ամենաքաղ-
ցեալ ճաշակացդ. սրբել սիրով յան-
դատապարտ ընդունելութիւն մե-
ծադունիդ այդմ պարգևաց. փա-
րել իմովս փոքրկութեամբ զքո
անբաւ մեծութեամբ. խառնել
միանալ անանջրպետ ընդ քեզ՝
այժմ և 'ի մահուս և յանապատ
յաւիտեանան: Յիսուս, ծանո ինձ
զքաղցրութիւն քո մեծ, զծածկեալն
յայսմ խորհրդեան սիրոյ քո
և ցաւոց, մի քան զմի հրաշալեաց,
և շնորհեա ինձ վայելել և զմայլել
'ի նոսին:

Կոչնակ կենաց մշանջենաւորաց,
որ վաղեալ յանմատոյց աթոռոցդ

884-2011
(20204-60)
(2-54,31-60)
(4351/38)

թափեցար յերկիր 'ի գիւտ վարա-
տելոցն յերկնագումար գաւթէդ,
և հրաւիրեցեր զնիրելիս քո 'ի գե-
բակայիցն օթեվանս, հետևողու-
թեամբ նեղ և նուրբ ճանապար-
հիդ. կամ զաջոյ իմէ, և մի թողուր
ինձ դեղևել 'ի շաւիղս ուղղու-
թեան՝ յոր ընտրեցի երթալ խաչ
ընդ ուս. այլ կատարել գօտէպինդ
զկրօնաւորութեան իմոյ ընթացս.
հանապազօր ճենճերմամբ 'ի սե-
ղանի ուխտիցն՝ զոր եդի քեզ ա-
ռաջի սրբոց քոց։

Հովիւ բարի, որ հոլովեաս հե-
տևողացդ 'ի վայրի դալարուոջ և
առ ջուրս հանգստեան, յանդոր-
րու սրտի և յուրախութեան մը-
տաց. բաց զակամնջս հոգւոյ իմոյ
'ի հանապազորդ լսելութիւն աս-
տուածայնոց քոց կամաց, և քաղ-
ցրացո զպատգամս քո 'ի շրթունս

իմ. որ հնազանդելով Հօրդ կամաց
ելեր յերկնից՝ի յերկիր, և ամենե-
ցուն տէրդ սպասաւորեցեր մարդ-
կան ռամկաց. տուր ինձ որպէս
դառն հլուաբար երթալ և փու-
թալ անխափար յառ՝ի քէն հրա-
մայեալն, ընթադրելով միշտ զկա-
մըս անձին առ ոտս խաչիդ. և զայն
միայն վերապատուելով կամ՝ յոր
կամք քո ճանաչեցին։

Զայն սիրալի երկնակառոյցուն-
կան, սկիզբն երանութեանց կար-
դացեալ յիմոյն Յիսուսէ, Աղքա-
տութիւն հոգւով, ամենունակ ան-
ընչութիւն. մերկացո զիս զիմ
յամենայն նիւթոյ և յերկ աշխար-
հականէ, ՝ի զգալւոյ և յիմանալոյ.
և ստացիր զիս թափուր յերկրա-
ւորաց, զի երկնաւորացն եղէց վեր-
ընդունակ. մի և փոքու իմիք նե-
ռեսցես կռուիլ՝ի սիրտ՝ որ տեառն

իւրոյ նուիրեալ է բոլորովին, և որում Աստուած միայն է բաժին։ Այո, Աստուած իմ և ամենայն ինչ. Աստուած իմ միայն բաւական առ ամենայն։ Եւ ինչ որ ոչ է աստուածային, ինչ՝ զոր ոչ կարասցէ հոգի բառնալ տանել ընդ իւր յաստեացս, 'ի բաց կացցէ 'ի նմանէ։

Ղեկավար զգուշահայեաց՝ ընդ զրահեղեալ և անդնդասոյզ ալիս նոզակալի կենցաղոյս, որովքեաստարաս արբութիւն սրտի, մաքրութիւն մարմնոյ, ողջախոհութիւն խմացուածոց, պարկեշտութիւն զգայարանաց, չափաւորութիւն կարիւորաց. պարտեալ ամենեա զզօրութիւն ընութեան իմոյ՝ յամենայն վերամարտ բռնութեանց մեղկաղէտ և աղտեղի կրից. մի տալ թոյլ հոգւոյ՝ որում երկինք են պատրաստեալ սրսկական, և մար-

ենոյ՝ որ Սարմնոյ քուամ հաղորդի, տէր Յիսուս, գալ ընդ գարշութիւն տղմաշաղախ և 'ի բերրութիւն անբանական. այլ սթափեցո զսիրտս իմ՝ ընդ հարանացելոցն քեզ հոգւով արթնասպասս կուսանաց, անաղտս պատմուճանաւ և անաղօտս լապտերաւ ակն ունել մուկց տարփալի առադասուն փեսայիդ երկնաւորի։

Ձշմարտութիւն մշանջենաւոր, որ էիր և եսդ միայն Ճանապարհ փրկութեան ամենեցուն՝ որոց եառուր իմաստս իմանալոյ զքեզ. սրբեա զաչս մտաց իմոց յամենայն աղտից կրից և նիւթոց. զի ծանեայց և սիրեցից և կրթեցայց միշտ 'ի բարին խակագոյն. ամենայն ուրեք, յամենայն դէպս, յամենայն ժամանակի քննեցից գաւոց զշաւիղ զգուշաւոր՝ զոր բացեր յեր-

կրի, և երթայց զհետ քո անխոտոր և անխոժոռ ընդ դիւր և ընդ դէժուար. բայց միայն փափագելով նմանել քեզ սիրով լաւութեանց, որովք միայն մարթ ելցէ ժառանգել զկեանսն յաւիտենականս։

Մարիամ, մայր Աստուծոյ և մարդկան, թագուհի երկնից և երկրի, վերականգնումն աշխարհի. միակ կէտ ամենագիւտ 'ի համայնաջինջ կորստեան. միայնդ կատարեալ 'ի համօրէն եղականքս, միայնդ ամենևին մաքրութեամբ գերքան զմահացուս և զանմահս. յառաջագէմ բնաւից, և գերագոյն յետ Էին գերագունի. յիշեա որպէս մայր խանդակաթ՝ և զիս զորդէգիրս քո յետնեալ, զառանդեալս քեզ 'ի Յիսուսէ քումմէ՝ կըտակաւ խաչին, և զնուիրեալս կամաւոր ուխտիւք։ Ո՛, որ զբար-

ձողն ամենայնի բարձեր, ո՛, որ ա-
մենափրկչին եղեր օժանդակ՝ 'ի
փրկութեան տիեզերաց, միջնոր-
դեա փրկել զիս նովին 'ի մեղաց և
'ի յաւերժ կորստենէ։ Հովանի քո
մայրական և աջ քո ասուածա-
կիր՝ եղիցին հանապազ 'ի վերայ
իմ, ո՛վ Ամենասրբուհի։

Յիսո՛ւս, Յիսուս. յոյս և ապա-
ւէն ամենայն հոգւոյ. ծայր և ծը-
րար էութեան իմոյ, Յիսուս. նա-
խաշաւիղ կարճառօտ կենացս, և
կէս հանդերձելոյ յաւիտենին.
քաղցրութիւն անճառ, ոչնչալի
զուարթնոց և ամենայն ընտրելոց։
Տուր ինձ ճաշակել ասատին կա-
թիլս յուղխից փափկութեան քո,
և քաղցրացուցանել զդառնու-
թիւն բարուցս։ Լսելի արա ինձ
զձայն քո ցանկալի. մարզեա զիս
հանապազ 'ի քաղցրալուր հրա-

մանս քո, եթէ Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ։ Ուս տո ինձ ինքնին, տէր Յիսուս, զհոգեկեցոյց զայդ գիտութիւն, որում էնք փոխանակ 'ի վերայ երկրի. զի գոնց զհանդիսատ հոգւոյ իմոյ, հանգուցից և զայլս ցածուն բանիւք. մի զոք խռովեցից և մի յուսեալք խռովեցայց։

Նեղելոց անդորրիչ, քաղցրաբեր լծադիր և օժանդակ բարձման բեռին փոքրոգւոյ, զոր երբեւ շալակ շուշանեաց գնես յուս քոյոց միամտութեամբ հեռեւողաց. զօրացո զկամն իմ մեղմեխ՝ բառնալ յօժարութեամբ և տանել զուարթութեամբ զոր և շնորհես վիշտ և վրատանգ կենցաղական։ Յորդորեա ըղհեղգութիւն կամացս, արիացո զվրհատութիւն բնութեանս, ընդունել անզանգէտ զդժուարսահամ

բոյրն, և տանել անորտուն զտագ-
նապեցուցիչն։ Հայելի հանապա-
զատես՝ լեցին ինձ զլուխ քո փշա-
զգած, և ձեռք և ոտք բեւեռեալք՝ ի
փայտն մահու. զի տարայց եւ ես
յօժարութեամբ զիմ խաչ փո-
քրիկ. արբից և ես զիմ բաժակ
լեղախառն. և համբերութեամբ
ստացայց զոգի իմ, ըստ անվրէպ
քումդ թելադրութեան։

Ցաւիլ շնորհաշուք, վերբերիչ
անկելոյ բնութեանն՝ ՝ի տահմա-
նեալն ՝ի սկզբանէ լուսաձեմ կա-
յանս. ձեռնտու և օժանդակ տր-
կարաց և տղայոց, դատարակ մա-
տաղ հասակի. որ ասացեր, Թոյլ
տուք մանկուսդ գալ առ իս, ուստ
և ինձ՝ զհաւատացեալն յիս հօտ
փոքրիկանց առաջնորդել առ քեզ
զգուշութեամբ, անտխեղծ բար-
դաւաճելով զսերմանեալն առ ՝ի

քէն 'ի նոսին շնորհաց բողբոջ. մարզել զմիտս նոցին և զսիրտ յե-ռանդն և 'ի գիւտ ճշմարտի և բար-ւոյ, յորդորընթաց կրթանօք 'ի կատարելութիւն կենաց։

Ո՛վ որ սուրբդ ես և ամենա-սուրբ, և 'ի սուրբս հանգուցեալ. որ զհողեղէնն զանգուած սիրով հրեղէն յարդարես, և զմահնեալսն մահու՝ զուարթնոց վերնոց զու-գադասես. տուր, Տէր, խնամս և տենչանս սրբութեան՝ կապելոցս և կազմելոց կաւեղէն հեթեթանօք. պահեա զպանդխտեալքս 'ի տըղ-մուտ և 'ի վշուտ հոլովիս՝ անա-ղատս 'ի հոգի և 'ի մարմին, տա-ճարացուցանելով հոգւոյ քում կենարարի։ Հեռացո յորդւոց մար-դկանէ զրանարկուին մենքենայս. թուլացո զհրապոյրս ախտից. կըր-թեա զկամս 'ի կցորդութիւն քո-

յոց կամաց. բարձրացո զաւորան-
կեալ սիրոս՝ ընդ խողովակ գեղար-
դնախոց կողնդ առ սիրտ քո սի-
րածաւալ, ըմպել և արբենալ 'ի
ջրոյդ անմահութեան:

Զարեաց ատեցող, արարիչ և
պարգևիչ բարեաց, լցո 'ի բարու-
թենէ քումէ զարարածս ամենայն.
հերքեա և հեռացս 'ի ստեղծուա-
ծոց քոց զաղդումն հակառակոր-
դին. լցցի աշխարհ համօրէն կամաք
քաղցրութեան քո, որպէս լի են
երկինք և երկիր փառաք քո: Պար-
գևեա երկրի զոր յերկնից քերեր
խաղաղութիւն, և մարդկան՝ զա-
ւետարանեալն յեկաւորութեան
քում զառ միմեանս հաճութիւն:
Ընդարձակեա, Տէր Քրիստոս, ըզ-
դաւիթ եկեղեցւոյ քո, և ժողովեա
'ի նոյն զոր ստացար միանգամ ա-
րեամբ քով կենարարաւ: Դարձո

զմոլորեալս 'ի գիտութիւն ճշմար-
տութեան։ Տուր զօրութիւն տկա-
րաց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։
Մխիթարիչդ ամենայնի, մխիթա-
րեա զտրամեալս և զվշտակիրս։
Լցո զպէտս կարօտելոց ըստ պէս
պէս կարեաց և ըստ իւրաքանչիւր
օգտի։

Պարգևատուս ամենառատ, պար-
գևեա ընդ իմ յաննման շնորհացդ՝
այնոցիկ, որոց առաւելս եմ պար-
տական շնորհս և երախտիս, ըստ
առ 'ի նոցանէ առ իսն հասելոց
պէս պէս երախտեաց. ծնողաց ի-
մոց և դաստիարակաց ըստ մար-
մնոյ և ըստ հոգւոյ. և որք վասն
իմ յանձն առին աշխատութիւն և
նեղութիւն. որք սպասս ինչ երբեք
հարին ինձ, և որք զյետինն հար-
ցեն սպասս՝ 'ի ժամանակի եկեցն ի-
մոց 'ի կենցաղոյս. և որք յետ աս-

տեսցո՝ յիշեսցեն և ապօթեսցեն 'ի հանգիստ հոգացելոյս մարմնով և հրաժարելոյս հոգւով։ Այլ և չարախօսաց խմոց և առելեաց՝ եթէ գոցին, ներեա և հատո անոխակալութեամբ։

Ինչան չարեաց, մաքրութիւն աշխարհի, Քրիստոս Յիսուս, որ եկիր բառնալ զգայթակղութիւն յարարածոց քոց, բարձ և ինչեա յուշոյ և 'ի մոտաց, 'ի բարուց և 'ի սրտից զամենայն գայթակղութիւն, զոր թէ գործով կամ բանիւ կամ գրով, գիտութեամբ կամ անգիտութեամբ՝ եռու մեծի կամ փոքու. մի զոք գատապարտեր վասն խմոց սխալանաց և չարութեան. այլ լեր նոցին ներող և ինձ քաւիչ։ Թող և անգիտութեան և յանցման նոցին՝ զոք հատուցին ինչ ինձ գայթակղութիւն կամ ինչաս։ Դարձո

խապառ զաչս իմ 'ի չարէ, և զսիրտ յատելութենէ, և բնեռեա յերկիւղ քո և 'ի սէր՝ անմեկնելի զողութիւնք։

Որահ անմոլար և անկորուստ 'ի կեանս և 'ի մահս. որ 'ի գիւտ վարատելոցս և տարապրելոց յերանաւէտ կայանիցն՝ յանձն առեր զչարչարանս և զմահ դառնակրակիծ, որպէս զի քաղցրացուցես մեզ զարբու�անհրաժարելի բաժակին՝ որ պատրաստեալն է ամենայն հոգածնի. գիւրեա, աղբիւր գթութեանց, զտագնապ օրհասի ստեղծուածոց ձեռին քո. և յիշեա, զի քո պատկեր է՝ զոր եղծանէ մահ. անցո ընդ ահագին անդունդս անծանօթին՝ նրբաշաւիղ յուսոյն կամրջաւ՝ յաշխարհ կենդանեաց, ուր ոչ ևս մերձեսցի ապականութիւն։ Մաքրեա մեղսա-

քաւիչ պատարագիդ հանապազորդութեամբ՝ և զբիծս հոգեացն արդեղականերց 'ի քաւութեանն բանոյ. համառօտեա զհարկս հատուցմանն, և ՀՀեպեցո առ քեզ՝ զորս վասն քո ստեղծեր, Տէր ողորմեր։

Սէր անսկիզբն և անվախճան, միայն իսկութիւն և Հշմարտութիւն. երանութիւն ամենալիր, կատարումն էութեան իմոյ, կամակ կարօտութեան սրտիս. Աստուած իմ և ամենայն ինչ. բորբոքեա զանձն իմ հրովդ զոր եկիր արկանել յերկիրս յայս. վերուզղեա զզգայուն իմ և զլեղս առ քեզ՝ առ հաստիչդ իմ. դարձո զհոսանս հոգւոյս յաղբիւրն սկզբնաբուղխ, յորմէ եկ և յոր վերադարձցի ամենայն բարի բանական։ Տէր, քո իսկ էի, քո եմ ես և եղէց քո բոլորովիմբ։ Ամենայն զօրութիւնք և

ամենայն կիրք որք ներգործեն և ներգործեսցեն յիս՝ առ քեզ վերբերցին։ Յառաջեսցէ, Տէր, հոգիս իմ հանապազ, 'ի ժամադրութիւնն ցանկալի։ Հասցէ, Յիսուս, և հոգիս այս՝ քեզ և առ քեզ, և առ Հայրն քո և Հոգիդ սուրբ։

Վասն սիրոյ քո յաւիտենական, վասն սիրոյ Որդի քո Կուսի, և ամենայն ընտրելոց քոց, աղաչեմ և խնդրեմ 'ի քէն, Տէր Յիսուս, թող ինձ զպարտս իմ։ թող որդեգրութեամբ և անչնչաչարութեամբ, քանզի կարեմ՝ ամենակալդ, և կամիս՝ ամենագթածդ։ Աստուած, քաւեա զիս զմեղաւորս։ Աստուած իմ, դու միայն ես բաւական 'ի քաւել զմեղս իմ, թէպէտ և առաւել ևս ևս քան զթիւ աւուրց կենաց իմոց։ Ես ինձէն մեղայ և անկայ, առանց քո ոչ կարեմ կանգնել։ և ոչ

միով լուիք բարեաւ՝ առնել փոխա-
րէն չարեաց իմոց. զի չիք յիս և
ոչ մի բարի, բայց միայն յոյս ողոր-
մութեան քո, որ և այդ քո է
շնորհ. Աստուած իմ, պահեա ինձ
և 'ի կատար հասո զշնորհս զայս:

Տառապեալ բնութեանս անդոր-
բացուցիչ օժանդակ, Տէր Յիսուս.
տես 'ի տարակուսանս յանցաւո-
րիս, և յիշեա զգութս քո անքաւ,
որով անհասանելիդ 'ի հրեշտա-
կաց՝ հողեղէն եղեր, և 'ի հողեղի-
նաց անարգեցար: Յիշեա, Յիսուս,
զչարչարանս քո և զմահ. յիշեա
զնանձարուրս տղայութեանդ և
զվարշամանն դերեզմանիդ, և ո-
ղորմեա բաղմամեղիս. որ միայն
չքմեղս ինձ գիտեմ զնստուանու-
թիւն մեղանացս, և ես առաւել
զքո անհասանելի մարդասիրու-
թիւնդ: Յիսուս, փրկիչ ամենայն

աշխարհի, և իմ մեծոյս մեծակ Յի-
սուս, մի զիս անտես առներ երբէք.
զի գործ եմ մարդաշահ ձեռացդ,
և գին ամենաշնորհ արեան քո,
Յիսուս։

Որպէսզի համար ժամանակ կենաց
իմոց ահա համառօտեալ՝ի վախճան
անդր փութայ. և ահա մերձենայ
պահակ մահուն վարել զիս յաշ-
խարհ անծանօթ և աննման աշ-
խարհիս այսմիկ. աշխարհ՝ առ որ
տանի ամենայն ճանապարհ, և ոչ
մի ճանապարհ ոչ դարձուցանէ.
աշխարհ՝ յորոյ՝ի մուտս ապաւէն
ամենայն սիրտքանք, ամենայն յոյս,
ամենայն ընդունայնութիւն կեն-
ցաղոյս, և յաջորդեն երբք և կիրբք
ահեղք և ծանուցք, և դողան՝ի
նմանէ երկրածինք ամենայն։ Ա.յլ
Անմահիդ մեռելութիւն համեմեաց
և զդառնութիւն մահու։ Յիսուս,

զօրացո զսիրտս սատանեալ. կար-
կառ զձեռն քո ամենահաս՝ մինչ
այլ յայլմէ լինիմ. խաչ քո ամենա-
հաս առաջնորդեսցէ ինձ ընդ ըս-
տուերս մահուն։ Ի քեզ յուսա-
ցեալ եմ, Աստուած իմ Յիսուս,
մի սատանեցայց յաւիտեան։

Յանկամ եղանել զհետ քո, Տէր
իմ Յիսուս, 'ի ցաւալից կենաց աս-
տի և մոռանել ընդ դուռն օթևա-
նաց զոր պատրաստեցեր 'ի յաւի-
տենից, և բացեր անօրէնութեամբ
քով։ Գիտեմ զի անցք ևեթ են ընդ
երկիր՝ կեանքս այս հակիրճ. մի
թողուր ինձ վայրապար վարանել
'ի ամին. այլ տուր յամենայն ժամ
պատրաստ կալ անդարձականդ
կոչման։ Շնորհեա ինձ ահիւ և
զղջմամբ և սիրով՝ ակն ունել ան-
պատրուակ տեսութեան աստուա-
ծութեանդ աքանչելւոյ։ Խոհեմա-

ցո զին՝ յառաջ քան զօրհաս խո-
նարհել 'ի հող, մոռանել 'ի քննու-
թիւն անաչառդ առենի. որպէս զի
զդաստուրեամբ կեցից զմնացուա-
ծքս աւուրց իմոց, և աներկիւղ
հաւատով հանդիպեցայց Հաստչիդ
իմոյ։

Ինչ ծեալ բնութեանս նորոգիչ
յանեղծութիւն. յանձն առնում,
Տէր, այժմէն մինչդեռ կամ յուշի
և յաղգոջ, զժամանակ և զօրինակ
մահու՝ զոր սահմանեալդ ես վասն
իմ։ Հայր յաւիտենական, եղիցին
կամք քո, որպէս 'ի կեանս և 'ի
մահուս։ Կատարեսցի և յիս ար-
դարութիւն քո անաչառ. բայց
միայն զօրացո զմիտս իմ՝ զաղիաղ-
փուն և զսիրտս վերհերոտ. յաւէլ
ինձ հաւատս, զի խոկացից և կըր-
թեցայց 'ի վախճան յոր հանապաղ
մերձենամ։ Կենդանեաւ իմով մա-

ուսցանեմ քեզ, տէր, զմահ իմ, որպէս պատարագ յեռին. օրհնեա և ընկալ. և երկնեա զիս վերատին 'ի ծնունդ կենաց անմահից։

Փարատիչ փորձութեանց և փրկիչ հոգւոց, Յիսուս. Յիսուս իմ ամենայն յամենայնի. լեր ընդ իս հանապազ. և կաց անմեկին 'ի պահու որ ելցէ ինձ յեռին. 'ի պաշարել վտանգաց, 'ի հատանել անդարձեցն, 'ի վերջնումն պատերազմի, 'ի ճիգն յեռին հոգեմարտ դարանակալին, 'ի կուռել մթերել զինն և խաւարի և մեայլի մոտաց, յարհաւիրս լուծման բնութեանս, 'ի դեղեալ նժարից ահի և յուսոյ՝ ընդ արդարութիւն քո և ընդ գերթութիւն։ Ո՛վ Տէր իմ Տէր, դու որ 'ի մրրկի եռուր հեռի ոտիւք կոխել զկոհակս կուտակադէզ ծովուն, անցո և զիս անվտանգ ընդ

սպառնալիս ամենակուլ աչեացն, և հատս յանէրկևանդ նաւահան-դիստ, քան զմոլխասկանն վերերդել յաւերժ փրկութիւն։

Քաւութիւն բանաւոր աշխարհի, քահանայապետս յառաջ քան զզոհ և զառիթ զոհի, ինքդ միայն պատարագ անարատ և արժանաւոր, յորում հանդուցեալ կայ ամենայն յոյս եղականաց, Տէր Քրիստոս, քաւեա զյանցանս իմ և զանբաւութիւն պարտեացս՝ զոր չիցեմ հատուցեալ յուղղոջ կենցաղոյս, և վասն որոյ արկայց 'ի բանտ հատուցման. յիշեա յայնժամ զայժմուս պաղատանս՝ կենդանեաւ կորացելոյս 'ի վնիռ դերեզմանի և յանդրադոյն ևս։ Ցօղ ամենասրբիչ արեանդ և մաղթանք եկեղեցւոյ քո սրբոյ՝ ծաղեսցեն ինձ լոյս 'ի մթանն մեծի, և ժամա-

նեցուսցեն զՀոգի իմ 'ի գերկս քո փարելիս։

Օրհնութիւն քեզ, ամենասուրբ Երրորդութիւն, յամենայն արարածոց քոց և յինէն, 'ի յերկրի և 'ի յերկինս։ Օրհնութիւն քեզ զամենայն աւուրս կենաց իմոց, 'ի պահու կատարածիս, և յամբարել Ինչիարաց իմոց 'ի քնարան տապանին. օրհնութիւն քեզ 'ի կեանսն յաւիտենականս։ Եւ երբ ելցէ ինձ հասանել 'ի կեանսն յայն. երբ ելցէ ինձ հասանել յիսկզբ իմ։ Երբ տեսից զքեզ զնկատողդ իմ 'ի սկզբանէ. երբ գտից զմիայն սիրելիդ իմ, զմիայն լցուցչիչ ըղձից իմոց և կարեաց, զմիայն բաւականդ անյագուրդ սրտիս։... Ինչեա, փութա, հան ժամ երանելի. յոր յուսադնեալ անելիմիտ՝ խաղաղութեամբ ննջեցից և հանգեայց

024

յերեկոյացեալ կենցաղումն, յ՚ա-
ռաջ արագ զարթնուլ և առաւօ-
տեալ յանելեկ և յանվախճան ար-
քայութեան քում, Աստուած իմ,
Աստուած իմ։

ԱԶԳ. ԱՌԱՔԱՅԻ ՀԱՅ
ԹԵՐ. ՊՈՂՈՍՅԱՆԻ
ԱՐՔԱ-ՍՈՒ